Գանձասար - Կապան Ֆուտբոլային Ակումբ ՍՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 դեկտեմբեր 2019 թ.

ԵՐԵՎԱՆ 2020 թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-307/309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

10.04.2020 թ.
N 032003

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

_____Փ.Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվԱԾ 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

„Գանձասար-Կապան" Ֆ/Ա ՍՊԸ-ի
մասնակցին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է „Գանձասար-Կապան" Ֆ/Ա ՍՊԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝"Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիսպատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումերից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսկան հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը ակրող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում

ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ Ընկերության ձեռնարկատիրական գործառնության կամ ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ, որպեսզի արտահայտենք կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք պատասխանատու ենք աուդիտն իրականացնելու և դրա ընթացքում այն ուղղորդելու և վերահսկելու համար: Մենք միայն պատասխանատու ենք մեր արտահայտած կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ. Մկրտչյան _____

10.04.2020թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2019թ-ի դրությամբ

(հազար դրամ)

	Ծանոթ.	**2019թ.**	**2018թ.**
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	62,877	98,028
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	1,096	4,843
Պաշարներ	6	3,692	715
Տրամադրված փոխառություններ	7	7,000	15,000
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		74,665	118,586
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	1,405	3,183
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		1,405	3,183
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**76,070**	**121,769**
Պարտավորություններ			
Կարճաժամկետ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	912	82
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	10	8,140	7,638
Ընդամենը կարճաժամկետ պարտավորություններ		9,052	7,720
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**9,052**	**7,720**
Զուտ ակտիվներ		**67,018**	**114,049**
Սեփական կապիտալ			
Կուտակված շահույթ		66,918	113,949
Կանոնադրական կապիտալ	11	100	100
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**67,018**	**114,049**

Գարիկ Կարապողոսյան
Տնօրենի ժ/պ փոխարինող անձ

10.04.2020թ.

1-16 ծանոթագրությունները կազմում են 2019թ. ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2019թ ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթ.	**2019թ.**	**2018թ.**
Հասույթ			
ՈՒԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ	12	12,037	165,145
Հեռարձակման իրավունքներ		-	3,346
Այլ գործառնական եկամուտ	13	522,606	610,274
Ընդամենը հասույթ		**534,643**	**778,765**
Ծախսեր			
Աշխատավարձի գծով ծախսեր(խաղացողներ)		(164,159)	(130,062)
Աշխատավարձի գծով ծախսեր(այլ աշխատակիցներ)		(143,680)	(173,691)
Հիմնական միջոցների մաշվածություն		(1,932)	(2,171)
Այլ գործառնական ծախսեր	14	(296,451)	(429,496)
Ընդամենը գործառնական ծախսեր (բացառությամբ խաղացողների գրանցման հետ կապված ծախսերի)		**(606,222)**	**(735,420)**
Գործառնական շահույթ		**(71,579)**	**43,345**
Խաղացողների գրանցման ձեռքբերում և օտարում			
Ֆուտբոլիստների տեղափոխություններից օգուտ/(վնաս)	15	27,132	(47,033)
Ընդամենը օգուտ/(վնաս) խաղացողների գրանցման ձեռքբերում և օտարում		**27,132**	**(47,033)**
Վնաս գործառնական գործունեությունից		**(44,447)**	**(3,688)**
Ֆինանսական եկամուտ		(334)	(597)
Այլ եկամուտներ (ոչ գործառնական)		2	5
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից (վնաս)/եկամուտ, զուտ		(2,252)	965
Վնաս մինչև հարկումը		**(47,031)**	**(3,315)**
Շահութահարկի գծով ծախս		-	-
Տարվա զուտ վնաս		**(47,031)**	**(3,315)**
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս)			
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս)		-	-
Ընդամենը համապարփակ վնաս		**(47,031)**	**(3,315)**

1-16 ծանոթագրությունները կազմում են 2019թ. ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2019թ ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.	**100**	**117,264**	**117,364**
Զուտ շահույթ	-	(3,315)	(3,315)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	**100**	**113,949**	**114,049**
Զուտ վնաս	-	(47,031)	(47,031)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**100**	**66,918**	**67,018**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2019թ. ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2019թ.	2018թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	(47,031)	(3,315)
Ճշտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	1,932	2,171
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	2,252	(965)
Դրամական միջոցների հոսքեր մինչ շրջանառու կապիտալի փոփոխություններ	**(42,847)**	**(2,109)**
Դեբիտորական պարտքերի նվազում	2,999	5,999
Կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում)	1,574	(4,230)
Պաշարների աճ	(2,977)	(583)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(41,251)**	**(923)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(154)	(689)
Փոխառության ստացում/(տրամադրում), զուտ	8,000	(2,000)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**7,846**	**(2,689)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված փոխառություններ, զուտ	-	4,268
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**-**	**4,268**
Դրամական միջոցների զուտ հոսքեր	**(33,405)**	**656**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,746)	(3,207)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	98,028	100,579
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	**62,877**	**98,028**

1-16 ծանոթագրությունները կազմում են 2019թ. ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Գանձասար-Կապան Ֆուտբոլային Ակումբ ՍՊԸ-ն (Հետայսու՝ Ակումբ) ստեղծվել է 27.02.2015թ. Գանձասար Ֆ/Ա ՀԿ-ի վերակազմավորման արդյունքում: Ակումբը հանդիսանում է Գանձասար Ֆ/Ա ՀԿ-ի իրավահաջորդը:

2 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- հայկական ֆուտբոլի զարգացման համար միավորել ֆուտբոլասերներին, ֆուտբոլի մասնագետներին, մարզիչներին, ֆուտբոլիստներին
- ֆուտբոլի մասսայականության և մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման միջոցներով նպաստել ազգաբնակչության առողջության պահպանման ու ամրապնդման, ֆիզիկական և բարոյական դաստիարակության գործընթացին
- ֆուտբոլային ակումբի համար պատրաստել և ակումբը համալրել առաջնակարգ ու վարպետ ֆուտբոլիստներով, մասնակցել Հայաստանի Հանրապետության ֆուտբոլիառաջնությանը, անել առավելագույնը բարձրագույն խմբում ուժեղագույն ակումբների հետ համահավասար հանդես գալու ու մրցանակային տեղ գրավելու համար
- կազմակերպել և սատարել այնպիսի ծրագրերի իրագործմանը, որոնք ուղղված են նպաստելու ֆուտբոլի և սպորտի զարգացմանը
- կազմակերպել ֆուտբոլի մասսայականացմանն ուղղված լայն քարոզչություն
- սատարել մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանը, կազմակերպել զանգվածային միջոցառումներ (հանդիպումներ ճանաչված վետերան ֆուտբոլիստների, մարզիչների, ֆուտբոլային լրագրողների և մեկնաբանների հետ), աջակցել բակային ֆուտբոլի և ՝կաշվե գնդակի՝ առաջնության բարի ավանդույթների վերականգնմանը
- նպաստել ֆուտբոլի մասնագիտացված դպրոցների զարգացմանը
- իրականացնել ֆուտբոլի զարգացման, ֆուտբոլային հերթափոխի պատրաստման, աշխարհի, եվրոպայի առաջնություններին և օլիմպիական խաղերին ՀՀ ազգային հավաքական թիմերը բարձրակարգ ֆուտբոլիստներով համալրելու ծրագրեր և պատվերներ
- ուսումնասիրել և մասայականացնել առաջավոր ֆուտբոլային երկրների դրական փորձը
- նպաստել ֆուտբոլի մարզիչների, մրցավարների որակավորման բարձրացմանը, սերտորեն համագործակցել ՀՖՖ-ի հետ և իրականացնել համատեղ ծրագրեր
- ապահովել մարզիկների, մարզիչների ու այլ մասնագետների սոցիալական պաշտպանվածությունը, հոգատարություն ցուցաբերել ֆուտբոլի վետերանների նկատմամբ
- իրականացնել իր կանոնադրական նպատակներին համապատասխան և օրենքով չարգելված այլ գործունեություն

3 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու հիմունքները.

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն և ներկայացվել են ՈՒԵՖԱ-ի՝ ֆուտբոլային ակումբների լիցենզավորման համակարգի համաձայն, որը համապատասխանում է Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտներին (ՖՀՆՄՍ):

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցումների իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները: Հասույթն Ընկերության կողմից ճանաչվում է այն ժամանակ, երբ գործարքի հետ կապված տնտեսական օգուտներն ու կրած ծախսերը կարող են հուսալիորեն գնահատվել և կա հավանականություն, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն:

Հիմնական միջոցներ

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Այլ կողմերից ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումներն հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում:

Հետագա ծախսումները, որոնք վերաբերում են արդեն ճանաչված հիմնական միջոցների միավորին, ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Հիմնական միջոցների գծով կատարվող մնացած բոլոր հետագա ծախսումները, այդ թվում հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման վրա կատարված ծախսումները, ճանաչվում են որպես ժամանակաշրջանի ծախս:

Հիմնական միջոցների միավորի մաշեցվող (մաշվածության միջոցով որպես ծախսում ճանաչման ենթակա) գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով.
Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.՝

Տրանսպորտային միջոցներ	- 5 տարի
Սարքավորումներ	- 1-5 տարի
Արտադրական և տնտեսական գույք	- 5 տարի
Այլ հիմնական միջոցներ	- 5 տարի

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» վարձակալության հաշվառման նոր ստանդարտը ուժի մեջ է մտել 2019թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը զգալիորեն չի փոխում վարձակալության հաշվառումը վարձատուների համար: Սակայն, այն պահանջում է վարձակալներին ճանաչել վարձակալությունների մեծ մասը իրենց հաշվապահական հաշվեկշռում որպես վարձակալության գծով պարտավորություն՝ համապատասխան ակտիվի օգտագործման իրավունքի հետ մեկտեղ: Վարձակալները պետք է կիրառեն միասնական մոդել բոլոր ճանաչված վարձակալությունների համար, բայց հնարավորություն ունեն չճանաչել կարճաժամկետ վարձակալությունները և ցածր արժեք ունեցող ակտիվների վարձակալությունը:

Պաշարներ

Պաշարների կազմում հաշվառվում են նյութական ակտիվները , որոնք՝

- պահվում են սովորական (ամենօրյա) գործունեության ընթացքում կանոնադրական նպատակների իրականացման համար,
- արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով:

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է առաջին մուտք առաջին ելք (ՖԻՖՈ) բանաձևով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ

Ակումբի ֆինանսական հաշվետվություններում արտացոլված բոլոր հոդվածները չափվում են հայկական դրամով, որը հանդիսանում է Ակումբի հիմնական արժույթ:

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը և վնասը ճանաչվել է ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ստորև ներկայացվում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Ակումբի կողմից օգտագործված տարեվերջյան փոխարժեքները.

	31 Դեկտեմբեր 2019թ.	31 Դեկտեմբեր 2018թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	479.70	483.75
ՀՀ դրամ/1 ԵՎՐՈ	537.26	553.65

4 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական հոսքերի հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցները և դրա համարժեքները ներառում են հետևյալը.

(հազար դրամ)

	2019թ.	2018թ.
Դրամական միջոցներ դրամարկղում	977	616
Ընթացիկ բանկային հաշիվներ	61,900	97,412
	62,877	**98,028**

5 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

(հազար դրամ)

	2019թ.	2018թ.
Տրված կանխավճարներ	1,022	842
Կանխավճարներ աշխատավարձի գծով	72	4,000
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	2	1
	1,096	**4,843**

6 ՊԱՇԱՐՆԵՐ

(հազար դրամ)

	2019թ.	2018թ.
Սպորտային պարագաներ	3,228	599
Արագամաշ առարկաներ	464	91
Այլ նյութեր	-	25
	3,692	**715**

7 ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(հազար դրամ)

	2019թ.	2018թ.
Տրամադրված փոխառություններ	7,000	15,000
	7,000	**15,000**

7,000 հազ. դրամ փոխառությունը տրամադրվել է ակումբի գլխավոր մարզիչ Յաշա Բարսեղյանին: Փոխառությունը անտոկոս է և տրամադրվել է մինչև 15.03.2020թ.:

8 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

(հազար դրամ)

	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**3,822**	**2,769**	**135**	**2,783**	**9,509**
Ավելացումներ	125	-	-	564	689
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,947	2,769	135	3,347	10,198
Ավելացում	-	-	-	154	154
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,947**	**2,769**	**135**	**3,501**	**10,352**
Մաշվածություն					
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,390**	**983**	**68**	**1,403**	**4,844**
Տարեկան մաշվածություն	721	553	27	870	2,171
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,111	1,536	95	2,273	7,015
Տարեկան մաշվածություն	623	554	27	728	1,932
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,734**	**2,090**	**122**	**3,001**	**8,947**
Զուտ հաշվեկշռային արժեք					
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**836**	**1,233**	**40**	**1,074**	**3,183**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**213**	**679**	**13**	**500**	**1,405**

9 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

(հազար դրամ)

	2019թ.	2018թ.
Կրեդիտորական պարտքեր ձեռքբերումների գծով	876	82
Այլ ընթացիկ պարտավորություններ	36	-
	912	**82**

10 ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ

(հազար դրամ)

	2019թ.	2018թ.
Կրեդիտորական պարտքեր եկամտային հարկի գծով	7,716	7,233
Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական վճարի գծով	357	331
Կրեդիտորական պարտքեր գույքահարկի գծով	5	5
Կրեդիտորական պարտքեր դրոշմանիշային վճարի գծով	62	69
	8,140	**7,638**

11 ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

(հազար դրամ)

	2019թ.	2018թ.
Հայտարարված և վճարված կանոնադրական կապիտալ	100	100
	100	**100**

Ընկերության միակ մասնակիցն է ,,Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ՛՛ Բարեգործական ՀՄԴ-ն:

12 ՈՒԵՖԱ-ի ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ

(հազար դրամ)

	2019թ.	2018թ.
Համերաշխության վճարներ	12,037	165,145
	12,037	**165,145**

13 ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ

(հազար դրամ)

	2019թ.	2018թ.
Աջակցություններ/նվիրատվություններ կապակցված կողմերից	520,106	604,188
Այլ	2,500	6,086
	522,606	**610,274**

1-16 ծանոթագրությունները կազմում են 2019թ. ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

14 ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2019թ.	2018թ.
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	496	136
Գրասենյակի վարձակալություն	3,300	7,553
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	229,825	357,334
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	103	129
Մարզման ծախսեր	22,030	36,651
Մարզչական դասընթացների ծախսեր	750	-
Բուժման ծախսեր	6,454	5,640
Վերահայտավորման, մուտքավճարների և տուգանքների ծախսեր	7,203	6,966
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	1,546	3,885
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	6,200	5,794
Խաղերի սպասարկման ծախսեր	11,770	4,235
Բանկային և ապահովագրության ծախսեր	508	883
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	6,265	290
	296,451	**429,496**

15 ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՈՒՏ/(ՎՆԱՍ)

(հազար դրամ)

	2019թ.	2018թ.
Ֆուտբոլիստի փոխհատուցման գումար	27,608	100
Ֆուտբոլիստի ձեռքբերման ծախսեր	(476)	(47,133)
	27,132	**(47,033)**

16 ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ

Ընկերության միակ մասնակիցն է ,,Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ՛՛ Բարեգործական ՀՄԴ-ն:

(հազար դրամ)

,,Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ՛՛ Բարեգործական՛՛ ՀՄԴ	2019թ.	2018թ.
Հիմնադրամից ստացված անհատույց գումարներ	520,000	604,188
	520,000	**604,188**

(հազար դրամ)

Գառնիկ Աղաբաբյան՝ տնօրենի ժ/պ	2019թ.	2018թ.
Հաշվարկված աշխատավարձ և պարգևատրումներ	15,600	19,571
	15,600	**19,571**